Ռուս ազգութեան աչքում միշտ մեհ և անմոռաց կացուցանելու Ռուս գրականութեան և տպագիտութեան ժամանակի կեանքին ոգի տուող Հայ-գրողներին և գեներալներին, թող նա չմոռանար գոնէ Գր. Զանշիանին՝ իսկ գեներալների սոսկ պատկերները թեթև կենսագրականով անմոռաց մի գործ է։ Ռուս մամուլը շարունակ երախտագիտութեամբ յիշում է, որ Պետական Դումայի գոյութեան նախաձեռնութեան պատիւը պատկանում է դեռ Աղէքսանդր Բ-ի ժամանակում Հայազն Լոռու-Մելիքեանին, բայց Պապայեան միմիայն նկարն է հրամեցէք անում Ռուս ընթերցողին։ Իսկ Մարինեան Այվազովսկին ամբողջ մարքից ընկած է եղել։ Որ Պապայեան բռնանալ սիրում է գրական գործում աշխատել, որ գիտէ Ռուս լեզուն դա շատ գովելի է. բայց պատմագրի հեղինակ վաստակելու համար ցանկանում եմ ամբողջ պատրաստականութիւն և կարողութիւն։

ՆԵՐՍԷՍ քահ. ՀԵՐԹԵՒՑԵԱՆ

ՀՐԱՒԷՐ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400 ԱՄԵԱՅ ՅՕԲԵԼԵԱՆԻ ՅԱՆՁՆԱԽՄԲԻ

Չորս հարիւր տարի առաջ, 1512 թուին, Վենետիկ քաղաքում լոյս տեսաւ հայերէն առաջին տպագրուած գիրքը։

Հայ միտքը, հայ գրականութիւնը այս դեղեցիկ սկզբնաւորութեամբ հաղորդակից էր դառնում եւրոպական քաղաքակրթութեան այն սքանչելի գիւտին, որ բարերարել է համայն մարդկութիւնը և որի հանդէպ վերջին միշտ իրան երախտագէտ ու սքանչացող է զգացել։

Այսօր, 1912 թուականին, հայ տպագրութեան չորսհարիւրամեայ յոբելեանի տօնակատարութեան բացառիկ բարեբախտութիւնն է վիճակում հայ ժողովրդին։

Չկայ երկրի վրայ մի ազգ, մի ժողովուրդ, որ տօնած չը լինի իր տպագրութեան յոբելեանը։ Ու այսօր հայ ժողովրդին է տուիթ ներկայանում հանդէս գալու քաղաքակիրթ աշխարհի առաջ ու ցոյց տալու, որ ինքն էլ մի գիտակից ու պարտաճանաչ ժողովուրդ է, որ, յիրաւի, այդ բազմաչարչար ժողովուրդը Արեւելքի մութ ու մռայլ միջավայրում էլ կարողացել է գնահատել մարդկային բարօրութեան ու երջանկութեան ամենամեծ գործօնը—գիրն ու գրականութիւնը, և այսօր, այդ մեծ գործօնի տօնին ուզում է իր երախտագիտութիւնն ու մեծարանքն ընծայել նրան։

Այս չորս դարերի ընթացքում հայ գիրն ու գրականութիւնը զարգացին աշխարհիս համարեա բոլոր կողմերում։ Եւրոպական, Ասիական, Ամերիկեան ու Աֆրիկեան ցամաքների վրայ հայ միտքը, շնորհիւ հայ տպագրութեան՝ բազմաւոր ու գեղեցիկ գործունէութիւն ցոյց տուեց. տպագրեցին բազմաթիւ գրքեր, լրագրներ, որոնք էլ կանցին-կսփեցին հայերիս ներկայ կուլտուրան և պատրաստեցին ապագայ զարգացման, յառաջադիմման անհրաժեշտ հողը։

Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութեան նախաձեռնութեամբ, յուսալով և փափաքելով ամենուրեք ժողովներ կազմուեցին Թիֆլիզում գործող բոլոր հայ հիմնարկութիւնների և մամուլի ներկայացուցիչներից՝ այս համազգային մեծ տօնը արժանավայել կերպով մեծարելու համար։ Այդ ժողովներում ընդունուեցին մի քանի որոշումներ տօնի կատարման մասին և ընտրուեց մի յատուկ Յանձնախումբ, որ պիտի իրագործէ այդ որոշումները և առհասարակ կազմակերպէ յոբելեանական հանդէսը։

Այդ որոշումներն են՝ 1. Ի յիշատակ հայ տպագրութեան չորս հարիւր ամեակի կազմել գրական ֆոնդ. 2. Յոբելեանը տօնել այս տարի. 3. Հրատարակել այս առիթով հայ տպագրութեան պատմութիւնը սկզբից մինչև մեր օրերը. 4. Նկատի առնելով, որ տօնը համազգային է, ցանկալի համարել, որ տօնախմբութիւնը տեղի ունենայ միաժամանակ այն բոլոր հայաբնակ վայրերում, ուր ցանկութիւն կայ յաւերժացնելու մեր տպագրութեան 400 ամեակը. 5 Տօնակատարութեան համար յանձնարարելի համարել ներկայացումներ տալը, տպագրութեան և գրականութեան վերաբերեալ գոտեսութիւններ կարդացուելը, հայերէն տպագրութիւններից ցուցահանդէսներ սարքելը են։

Յոբելեանական Գործադիր Յանձնախումբս վճռել է յոբելեանի տօնը Թիֆլիզում կատարել ներկայ տարուայ նոյեմբերի 25–26-ին, այսինքն՝ Հայոց տասերի գիւտի տօնին, կցելով տպագրութեան 400 ամեակին և Հայերէն տասերի գիւտի 1500 ամեակը, որ թէև լրացել է մի քանի տարի առաջ, բայց չէ կատարուել պատշաճաւոր կերպով։ Յանձնաժողովս տասերի գիւտի մեծ յոբելեանն էլ ընդունում է տօնել

տպագրութեան յոբելեանի հետ, ի նկատի առնելով մեր հասարակութեան մէջ առաջացած միահամուռ ցանկութիւնը, որ հայ գրականութեան այս երկու տօնները միացուին։

Հայ տպագրութեան պատմութեան հրատարակութիւնը, Ցանձնաժողովիս աջակցութեամբ, յանձն է առել Կովկ. Հայոց Հրատ. Ընկ.-ը, եւ գրական ֆոնդի վերաբերութեամբ կարեւոր նախապատրաստութիւններն են տեսնուում։

Կատարելով ընդհանուր ժողովների յանձնարարութիւնը, Գործադիր Ցանձնախումբս, գիտելով Ձեզ, խնդրում է Ձեր աջակցութիւնը, որպէս զի հայ տպագրութեան 400 ամեայ յոբելեանը տօնուի ամենուրեք։ Ցանկալի է, որ Ձեզ մօտ էս պատշաճաւոր կարգով կազմակերպուեն յանձնախմբեր՝ տօնախմբութիւնը վերոյիշեալ եղանակներով կատարելու համար։ Ցանկալի է համարուում նաեւ, որ տեղական յանձնախմբերը միմեանց եւ մեզ հետ փոխադարձաբար կապ պահպանեն, որով հնար եղածին չափ փայլ ու շուք ընծայեն յոբելեանական հանդէսին եւ միաժամանակ էլ իրանց անհրաժեշտ՝ բարոյական թէ նիւթական՝ աջակցութիւնը ցոյց տան Գործադիր Ցանձնախմբիս իր զբաղմունքութեան ընթացքում։

Վստահ լինելով, որ մեր այս հրաւէրը լուռն արձագանք է գտնելու Ձեր եւ Ձեզ շրջապատող հայ հասարակութեան մէջ՝

Մնամք խորին յարգանօք՝ 400 ամեակի Յոբելեանական Գործ. Ցանձնախումբ.

Պատուաւոր անդամներ՝ Եփրեմ եպիսկոպոս, (Թիֆլիսի թեմի ժամանակաւոր կառավարիչ). † Գարբիել Սունդուկեանց.

Նախագահներ՝ բժ. Ա. Զարգարեան, Առաքել Բաբախանեան (Լէօ).

Գործադիր Ցանձնախմբի Անդամներ՝ Տիկին Նունէ Ալիբէկեան, Ալիքսանդր Մովսիսեան (Շիրվանզադէ). Աշոտ Ա.թանասեան, Արշակ Յարութիւնեան, Արտաշէս Արեղեան, Աւետիք Պողոսեան, Գարբիել Կաֆեան, Գիւտ Ադամեանց ա. ք., Երուանդ Լալայեան, Երուանդ Մինասեան բժ., Բաճակ Յարութիւնեան, Խաչատուր Տէր-Յովհաննիսեան, Միքայէլ Յովհաննիսեան (Նար-Դոս), Յովհաննէս Ակունեան.

Անդամ-Քարտուղար՝ Դ. Վարդանեան.

Գործ. Ցանձ.-ի հասցէն՝ Նամակների եւ դրամական նուիրաբերութիւնների համար.— Тифлисъ Правленіе Кавказскаго Армянскаго Издательскаго Общества. Бебутов. 25. Предсѣдателю доктору А. А. Заргарянцу.

Արտասահմանի նամակների եւ նուիրաբերութիւնների համար. Société dEdition Arménienne du Caucase Tiflis.

Հեռագրերի համար доктору Заргарянцу.
» » Dr. Zargariantz Tiflis.

«ՄՇԱԿ»-Ի 40-ԱՄԵԱՅ ՅՕԲԵԼԵԱՆԻ ՀԱՆԴԷՍԸ

Մայիսի 16-ին, համաձայն յոբելենական յանձնաժողովի նախօրօք արած յայտարարութեան, Տփխիսում հանդիսաւորապէս կատարուեց «Մշակ»-ի 40-ամեայ յոբելեանը։

Ցերեկուայ ժամը 12-ին վանքի Մայր եկեղեցում կատարուել է թեմի ժամանակաւոր կառավարիչ Եփրեմ եպ.-ի եւ հայ, ռուս, վրացի ինտելիգենցիայի և պատգամաւորների ներկայութեամբ հանդիսաւոր հոգեհանգիստ «Մշակ»-ի հիմնադիր Գր. Արծրունու և 40 տարուայ ընթացքում զոհած ու վախճանուած աշխատակիցների յիշատակին։

Բուն յոբելենական հանդէսը կատարուել է Տփխիսի արքունական թատրոնում. հանդէսն սկսուել է երեկոյեան ժամը 9-ին. սկզբում տեղի է ունեցել համերգ. որից յետոյ ազատէօզ կենդանի պատկեր, որը կազմել է նկարիչ Գէորգ Բաշինջաղեանը. ժամը 10-ին սկսուել է ուղերձների և շնորհաւորանքների ընթերցումը։ Պատգամաւորների և ներկայացուցիչների թիւը 200-ից աւելի է եղել։

Յոբելենական յանձնաժողովի նախագահ Սպենդիարեանը մի ճառով հանդէսը բաց է արել, ապա բժշկապետ Բ. Նաւասարդեանը կարդացել է նորընտիր կաթողիկոս Գէորգ Ե-ի օրհնութեան կոնդակը, Կիլիկիոյ Սահակ կաթողիկոսի հեռագիրը, որ հանդիսականները լսել են յատակայս. ապա կարդացուել են Կ. Պոլսի Արշարունի պատրիարքի և Օրմանեան աբբեպ-ի շնորհաւորական գրութիւնները այնուհետև սկսել են պատգամաւորները կարդալ իրենց ուղերձները և մատուցանել նուէրները։ Հանդէսը վերջացել է ուշ գիշերին։ Թատրոնը լի է եղել ծայր է ի ծայր։ Հետեւեալ օրը տեղի է ունեցել բանկէտ։

Այդ օրը լոյս են տեսել, 1) «Մշակը և հայ կիրը» հրատարակութիւն կոնտոնց յոբել. յանձնաժողովի ա. հատոր 300 էջ. 2) «Մշակի քառասնամեակ» աշխ. Լ. Դանիէլեանի հրատ. յոբել.